Թողարկման 18-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2011

մարտ

թիվ 3 (151)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Սնանկության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-56-Ն ՀՀ օրենքը

4 «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-57-Ն ՀՀ օրենքը

5 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-58-Ն ՀՀ օրենքը

5 «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-110-Ն ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-59-Ն ՀՀ օրենքը

6 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-60-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Արմանե Գազպա» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի դիլերային առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ին «Ռիա Մանի Տրանսֆըր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Մերլե» և «Մելանի Մոքիա» ՍՊԸ-ների գրավատների լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, ինչպես նաև «Ադալև Ռիա» ՍՊԸ-ին «MoneyGram» և «Contact» միջազգային դրամական փոխանցումների համակարգերին ենթագործակալության սկզբունքով անդամակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները որոշ ՓԲԸ-ների, «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՍՊԸ-ի մասնաճյուղերը գրանցելու, մի շարք ՍՊԸ-ներ ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու, ինչպես նաև ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված մի շարք ՍՊԸ-ների և «Կասկադ բանկ» ՓԲԸ-ին հաշվառումից հանելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները մի շարք ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների և արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 52Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 39-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը» հաստատելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 40-Ն որոշումը «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ը հաստատելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 41-Ն որոշումը «Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը հաստատելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 42-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 226-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 43-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 6-ի թիվ 33-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 44-Ն որոշումը «Անվանատիրոջ հաշիվների վարման նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 5/07-ը հաստատելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 45-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

23 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 55-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

25 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Սնանկության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի 83-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ.1» կետով.

«բ.1) ստորադաս փոխառություններից բխող պահանջները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
15 մարտի 2011 թ., Երևան, ՀՕ-56-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Բանկերի և բանկային գործունեության մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի 75.1-ին հոդվածի 2-րդ մասում՝

1) չորրորդ պարբերության «չորրորդ և հինգերորդ» բառերը փոխարինել «չորրորդ, հինգերորդ և վեցերորդ» բառերով.

2) վեցերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հինգերորդ հերթին՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.».

3) վեցերորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«վեցերորդ հերթին՝ բանկի մասնակիցների պահանջները:».

4) յոթերորդ պարբերության «երկրորդ և երրորդ» բառերը փոխարինել «երկրորդ, երրորդ և հինգերորդ» բառերով, ինչպես նաև «հինգերորդ» բառը փոխարինել «վեցերորդ» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
15 մարտի 2011 թ., Երևան, ՀՕ-57-Ն

** ՀՀՊՏ 2007 N 7 (531), 31.01.07:*
*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2011 թվականի փետրվարի 28-ին (ՀՀՊՏ N 17 (820), 23.03.11):
**** ՀՀԱԺՏ 1996 N 12:*

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե.1» ենթակետով.

«ե.1) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.».

2) «զ» ենթակետի «վեցերորդ» բառը փոխարինել «յոթերորդ» բառով.

3) երկրորդ պարբերության ««գ» և «դ»» բառերը փոխարինել ««գ», «դ» և «ե.1»» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
15 մարտի 2011 թ., Երևան, ՀՕ-58-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Արժեթղթերի շուկայի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 93-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) երրորդ՝ առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հերթերում չընդգրկված պահանջները.

4) չորրորդ՝ պետական բյուջեի և համայնքային բյուջեների նկատմամբ ներդրումային ընկերությունների պարտավորությունները.

5) հինգերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.».

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) վեցերորդ՝ ներդրումային ընկերության մասնակիցների պահանջները:».

3) 3-րդ մասի «երկրորդ» բառը փոխարինել «երկրորդ, երրորդ և հինգերորդ» բառերով, ինչպես նաև «հինգերորդ» բառը փոխարինել «վեցերորդ» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
15 մարտի 2011 թ., Երևան, ՀՕ-59-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 40 (172), 15.12.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2011 թվականի փետրվարի 28-ին (ՀՀՊՏ N 17 (820), 23.03.11):
[***] *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 138-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) երրորդ՝ առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հերթերում չընդգրկված պահանջները.

4) չորրորդ՝ պետական բյուջեի և համայնքային բյուջեների նկատմամբ Ընկերության պարտավորությունները.

5) հինգերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.».

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) վեցերորդ՝ Ընկերության մասնակիցների պահանջները:».

3) 3-րդ մասի «երկրորդ» բառը փոխարինել «երկրորդ, երրորդ և հինգերորդ» բառերով, ինչպես նաև «հինգերորդ» բառը փոխարինել «վեցերորդ» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
15 մարտի 2011 թ., Երևան, ՀՕ-60-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2007 N 27(551), 30.05.07:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2011 թվականի փետրվարի 28-ին (ՀՀՊՏ N 17 (820), 23.03.11):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Արմանե Գազպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի դիլերային առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 49Ա):

- ***«Ռիա Մանի Տրանսֆըր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 51Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Էսկո Ֆինանս» և «Արանգել Պրովայդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 57Ա, 60Ա):

- ***Ուժը կորցրած (գործողությունը դադարեցված) է ճանաչվել*** «Մեբլե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան թիվ ԳԳ-Ե107 լիցենզիան (որոշում թիվ 67Ա): (Մանրամասն տեղեկատվության համար կարող եք այցելել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, հասցեն՝ Երևան, Վ. Սարգսյան 6, հեռ.՝ (010) 59-29-58, ներքին՝ 15-21):

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Մելանի Մոքիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիան (որոշում թիվ 73Ա):

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 74Ա):

- ***«MoneyGram» և «Contact» միջազգային դրամական փոխանցումների համակարգերին ենթագործակալության սկզբունքով անդամակցության թույլտվություն է տրամադրվել*** «Ադալև Ռիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 75Ա):

- ***Գրանցվել են*** «Ամերիաբանկ» և «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Մոսկովյան», «Տիգրան Մեծ» մասնաճյուղերը, ինչպես նաև «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վայոց ձոր» ներկայացուցչությունը (որոշումներ թիվ 1/189Ա, 1/225Ա, 1/265Ա):

- ***Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառվել են*** «Պրինց», «Սթ Վիփ Ինդասթրի» և «Ֆարտունա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (որոշում թիվ 1/197Ա, 1/272Ա):

- ***Հաշվառումից հանել Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված*** «Պարմատո», «Գագ և Գայ», «Կեստէկ» և «Միկսել» սահմանափակ պատասխանատվությամբ և «Կասկադ բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 1/242Ա, 1/283Ա, 1/288Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 սահմանափակ պատասխանատվությամբ և 2 փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/206Ա, 1/243Ա-1/245Ա, 1/251Ա, 1/276Ա) և մի շարք փակ բաժնետիրական ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 9845000 դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/207Ա, 1/208Ա, 1/210Ա, 1/212Ա, 1/213Ա, 1/228Ա, 1/234Ա, 1/235Ա, 1/246Ա, 1/247Ա, 1/295Ա, 1/297Ա-1/300Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 52Ա որոշմամբ 2011 թ. մարտի 5-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 11.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.25%:***

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը» հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը» ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը» թիվ 162-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում բանկերն ընդունում են սույն որոշման ուժի մեջ մտնելով պայմանավորված իրավական ակտերը և ընդունելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

4. Սույն որոշումը տարածվում է աուդիտորական կազմակերպության կողմից բանկերի 2011 թվականի և դրանից հետո ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 մարտի 2011 թ., N39-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 1-ի
թիվ 39-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի (այսուհետ՝ բանկեր) կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությանը ներկայացվող չափանիշները:

2. Բանկը ներքին իրավական ակտերով սահմանում է աուդիտորական կազմակերպության ընտրության նկատմամբ սույն կարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշները մանրամասնող և դրանց գործնական կիրառումն ապահովող ընթացակարգերը, չափանիշների կիրառման մեթոդաբանությունը, աուդիտի ընդգրկման բնագավառները և սույն կարգի պահանջների կատարումն ապահովող այլ դրույթներ: Բանկերը կարող են սահմանել սույն կարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշներին չհակասող այլ չափանիշներ:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները սույն կարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

1) «ֆինանսական կազմակերպություն»՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ,

2) «աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր»՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից:

3) «աուդիտորական խումբ»՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որն անմիջականորեն ընդգրկված է բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:

ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4. Բանկն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշները.

1) բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման 5 տարվա փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings.vrl-financial-news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),

2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական),

3) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

4) աուդիտորական կազմակերպությունը բանկի հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու բանկի, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

5. Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

«Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում ապահովագրական ընկերությունները ընդունում են սույն որոշման ուժի մեջ մտնելով պայմանավորված իրավական ակտերը և ընդունելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

3. Սույն որոշումը տարածվում է աուդիտորական կազմակերպության կողմից ապահովագրական ընկերությունների 2011 թվականի և դրանից հետո ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 մարտի 2011 թ., N 40-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 1-ի
թիվ 40-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/11

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների և օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի (այսուհետ՝ ապահովագրական ընկերություններ) ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները:

2. Ապահովագրական ընկերությունը ներքին իրավական ակտերով սահմանում է իր ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ընտրության նկատմամբ սույն կանոնակարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշները մանրամասնող և դրանց գործնական կիրառումն ապահովող ընթացակարգերը, չափանիշների կիրառման մեթոդաբանությունը, աուդիտի ընդգրկման բնագավառները, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող անհրաժեշտ այլ դրույթներ: Ապահովագրական ընկերությունները կարող են սահմանել սույն կանոնակարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշներին չհակասող այլ չափանիշներ:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

3. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները սույն կարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ, վարկային կազմակերպություն,

2) ***«աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր»*** ՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,

3) ***«աուդիտորական խումբ»*** ՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են ապահովագրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:

ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4. Ապահովագրական ընկերությունը ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշները.

1) ապահովագրական ընկերության կամ բանկի աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, ապահովագրական ընկերության կամ բանկի աուդիտի իրականացման 5 տարվա փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings.vrl-financial-news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),

2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և փորձի ընթացքում առնվազն 5 ապահովագրական ընկերության կամ բանկի աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական),

3) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

4) աուդիտորական կազմակերպության աուդիտորական խմբում ընդգրկված համապատասխան գիտելիքներ և համապատասխան որակավորում ունեցող ակտուար, որը պետք է ունենա առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ակտուարական ոլորտում: Ընդ որում, ակտուարի համապատասխան որակավորումը հավաստող փաստաթուղթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայականը կամ օտարերկրյա կազմակերպության կողմից տրված ակտուարի որակավորումը (օրինակ՝ Սի-Ի-Ար-էյ, էֆ-Այ-էյ, էֆ-Այ-էյ-էյ, էս-էյ-Օ, Սի-էյ-էս) հավաստող համապատասխան փաստաթուղթը,

5) աուդիտորական կազմակերպությունն ապահովագրական ընկերության հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու ապահովագրական ընկերության, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

5. Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն ապահովագրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ ապահովագրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

*«Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածը, 84-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում ներդրումային ընկերություններն ընդունում են սույն որոշման ուժի մեջ մտնելով պայմանավորված իրավական ակտերը և ընդունելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

3. Սույն որոշումը տարածվում է աուդիտորական կազմակերպության կողմից ներդրումային ընկերությունների 2011 թվականի և դրանից հետո ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 մարտի 2011 թ., N 41-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 1-ի
թիվ 41-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/11

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի (այսուհետ՝ ներդրումային ընկերություններ) ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները:

2. Ներդրումային ընկերությունը ներքին իրավական ակտերով սահմանում է իր ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ընտրության նկատմամբ սույն կանոնակարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշները մանրամասնող և դրանց գործնական կիրառումն ապահովող ընթացակարգերը, չափանիշների կիրառման մեթոդաբանությունը, աուդիտի ընդգրկման բնագավառները և սույն կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող այլ դրույթներ: Ներդրումային ընկերությունները կարող են սահմանել սույն կարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշներին չհակասող այլ չափանիշներ:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները սույն կանոնակարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

1) ***«ֆինանսական կազմակերպություն»***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ,

2) ***«աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր»*** ՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,

3) ***«աուդիտորական խումբ»*** ՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են ներդրումային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:

ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4. Ներդրումային ընկերությունը ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշները.

1) ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings.vrl-financial-news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),

2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

3) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

4) աուդիտորական կազմակերպությունը ներդրումային ընկերության հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու ներդրումային ընկերության, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

5. Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն ներդրումային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ ներդրումային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 226-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 128-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի 2009 թվականի հուլիսի 28-ի ««Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ը հաստատելու մասին» թիվ 226-Ն որոշմամբ հաստատված «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում հաշվետու թողարկողները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ են ներկայացնում սույն որոշման ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ իրենց ներքին իրավական ակտերում կատարված փոփոխություններն ու լրացումները:

3. Սույն որոշումը տարածվում է աուդիտորական կազմակերպության կողմից հաշվետու թողարկողների 2011 թվականի և դրանից հետո ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 մարտի 2011 թ., N 42-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 1-ի
թիվ 42-Ն որոշմամբ

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի
թիվ 226-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/09

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

2. Սույն կանոնակարգը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հաշվետու թողարկող հանդիսացող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ներդրումային ընկերությունների, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի, ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի վրա, ինչպես նաև հաշվետու թողարկող հանդիսացող այն առևտրային կազմակերպությունների վրա, որոնց շնորհվել է «Բ-» և դրանից բարձր վարկանիշ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2006 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման կարգը» հաստատելու մասին թիվ 1/253-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման կարգի»:

3. Անձը հաշվետու թողարկող համարվելու պահից երեք ամսվա ընթացքում իր ներքին իրավական ակտերով սահմանում է իր ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ընտրության նկատմամբ սույն կանոնակարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշները մանրամասնող և դրանց գործնական կիրառումն ապահովող ընթացակարգերը, չափանիշների կիրառման մեթոդաբանությունը, աուդիտի ընդգրկման բնագավառները և սույն կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող անհրաժեշտ այլ դրույթներ, և ընդունելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Կենտրոնական բանկ: Հաշվետու թողարկողները կարող են սահմանել սույն կանոնակարգի 2-րդ գլխում սահմանված չափանիշներին չհակասող այլ չափանիշներ:

4. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները սույն կանոնակարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր»*** ՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,

2) ***«աուդիտորական խումբ»*** ՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են հաշվետու թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:

ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

5. Հաշվետու թողարկողը ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշները.

1) առնվազն 3 տարվա աուդիտորական գործունեության փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings.vrl-financial-news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),

2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

3) աուդիտորական կազմակերպությունը հաշվետու թողարկողի հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու հաշվետու թողարկողի, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

6. Սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված չափանիշների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է այն աուդիտորական կազմակերպությանը, որի աուդիտորական խմբում ներգրավված որակավորված աշխատակիցների տեսակարար կշիռն ավելի մեծ է (էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ և այլն կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված որակավորում):

7. Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն հաշվետու թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ հաշվետու թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 6-ի թիվ 33-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը և 67-րդ հոդվածի 7-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 6-ի ««Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ը հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ը 24-րդ կետից հետո լրացնել 24.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«24.1. Եթե օտարերկրյա պետության օրենսդրության համաձայն պահառուն իրավունք չունի բացել անվանատիրոջ հաշիվ տվյալ երկրում գործող անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում կամ պահառուի մոտ, ապա պահառուն իրեն և իր հաճախորդներին պատկանող արժեթղթերի առանձնացված հաշվառման նպատակով անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում կամ օտարերկրյա պահառուի մոտ բացում է արժեթղթերի երկու հաշիվ՝ մեկը սեփական արժեթղթերի, մյուսը՝ հաճախորդների արժեթղթերի հաշվառման համար, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկ արժեթղթերի հաշիվ, որտեղ կարող են հաշվառվել սեփական և հաճախորդներին պատկանող արժեթղթերը: Սույն կետով սահմանված դեպքերում պահառուն պարտավոր է ապահովել իրեն և իր հաճախորդներին պատկանող արժեթղթերի առանձնացված հաշվառումը (փաստաթղթային արժեթղթերի դեպքում՝ նաև առանձնացված պահպանումը)՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 մարտի 2011 թ., N 43-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

*«Անվանատիրոջ հաշիվների վարման նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 5/07-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 194-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Անվանատիրոջ հաշիվների վարման նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 5/07-ը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում պահառուները պարտավոր են պահառության գործունեությունը կարգավորող իրենց ներքին իրավական ակտերը, ինչպես նաև արժեթղթերի անվանատիրոջ հաշվի բացման և վարման արդեն կնքված պայմանագրերը համապատասխանեցնել սույն որոշմանը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 մարտի 2011 թ., N 44-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 1-ի
թիվ 44-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/07

ԱՆՎԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է լրացուցիչ պահանջներ պահառուների մոտ անվանատիրոջ հաշիվների վարման նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***արժեթուղթ***՝ ոչ ռեզիդենտներին պատկանող արժեթղթեր, որոնց սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող անձի կողմից,

2) ***պահառու***՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան արժեթղթերի պահառության ծառայություն մատուցելու թույլտվություն ունեցող անձ կամ Կենտրոնական դեպոզիտարիա,

3) ***անվանատեր***՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան արժեթղթերի պահառության ծառայություն մատուցելու թույլտվություն ունեցող անձ (բացառությամբ՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի), որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը, կամ օտարերկրյա անվանատեր,

4) ***օտարերկրյա անվանատեր***՝ օտարերկրյա անձ, որն իր երկրի օրենքների համաձայն իրավասու է իր անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ ունենալ,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

5) ***օտարերկրյա անձ***՝ անձ, որն ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հանդիսանում է ոչ ռեզիդենտ.

6) ***ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ***՝ ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված նշանակության:

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԱՆՎԱՆԱՏԵՐԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐՈՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներով հաշվառվող արժեթղթերի սեփականատերերի մասին տեղեկություններն արտացոլվում են պահառուի մոտ:

5. Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներով հաշվառվող արժեթղթերի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է այն պահից, երբ պահառուի մոտ արժեթղթերը գրանցվում են գնորդի (կամ նրա անվանատիրոջ) անունով: Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներով հաշվառվող արժեթղթերի գրավի իրավունքը ծագում է պահառուի մոտ համապատասխան գրառում կատարելու պահից:

6. Արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է փոխանցվել, եթե՝

1) գնորդ (ստացող) և վաճառող (փոխանցող) կողմերի օտարերկրյա անվանատերերը տարբեր անձինք են, կամ

2) գնորդ (ստացող) և վաճառող (փոխանցող) կողմերի օտարերկրյա անվանատերը նույն անձն է, սակայն գնորդի (ստացողի) և վաճառողի (փոխանցողի) արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքն ամրագրվում է պահառուի մոտ անվանատիրոջ համար բացված առանձին անվանատիրոջ հաշիվներում:

ԳԼՈՒԽ 4. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՎԱՆԱՏԻՐՈՋ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Պահառուն օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներով հաշվառվող արժեթղթերի յուրաքանչյուր սեփականատիրոջ գծով տվյալ օտարերկրյա անվանատիրոջ համար բացում է անվանատիրոջ առանձին հաշիվ:

8. Օտարերկրյա անվանատիրոջ և պահառուի միջև հարաբերությունները կարգավորվում են անվանատիրոջ հաշվի բացման և վարման պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր), պահառուի ներքին կանոններով, սույն կանոնակարգով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով:

9. Պայմանագիրը, օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով ներկայացված պահանջներից բացի, պետք է բավարարի նաև բոլոր հետևյալ լրացուցիչ պահանջները.

1) Պայմանագրում պետք է նշվի, որ օտարերկրյա անվանատերը պարտավորվում է պահառուին ներկայացնել արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված տեղեկատվությունը,

2) Պայմանագրում պետք է նկարագրվի օտարերկրյա անվանատիրոջ հաշվով արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցման կարգը և պահը,

3) Պայմանագրում պետք է նշվի, որ օտարերկրյա անվանատերը պարտավորվում է արժեթղթերի սեփականատերերին տեղյակ պահել արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման կարգի վերաբերյալ,

4) Պայմանագրում պետք է նշվի, որ արժեթղթերի սեփականատերերի փոփոխության, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների (այդ թվում՝ գրավադրում, կալանք) վերաբերյալ տեղեկատվությունն իրեն հայտնի դառնալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրյա անվանատերը պահառուին է ներկայացնում այդ տեղեկատվությունը: Նշված ժամանակահատվածում տեղեկատվության ներկայացման անհնարինության դեպքում տեղեկատվությունը ներկայացվում է ողջամիտ կարճ ժամկետում:

10. Օտարերկրյա անվանատերերը պահառուին են ներկայացնում առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) արժեթղթերի՝ ֆիզիկական անձ սեփականատիրոջ անունը և ազգանունը, իսկ իրավաբանական անձ սեփականատիրոջ՝ լրիվ անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը,

2) արժեթղթերի՝ ֆիզիկական անձ սեփականատիրոջ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի սերիան, համարը, իսկ իրավաբանական անձ սեփականատիրոջ՝ հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը,

3) արժեթղթերի՝ ֆիզիկական անձ սեփականատիրոջ բնակության վայրը, իսկ իրավաբանական անձ սեփականատիրոջ՝ գտնվելու վայրը և փաստացի գործունեության վայրը,

4) արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների (այդ թվում՝ գրավադրում, կալանք) փաստերը (առկայության դեպքում):

11. Օտարերկրյա անվանատիրոջ կողմից սույն կանոնակարգով նշված տեղեկատվության չտրամադրման դեպքում պահառուն պարտավոր է հրաժարվել անվանատիրոջ հետ Պայմանագրի կնքումից, իսկ արդեն կնքված Պայմանագրի առկայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում լուծել Պայմանագիրը:

ԳԼՈՒԽ 5. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12. Սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված տեղեկատվությունը ստանալուց հետո պահառուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում ստացված տեղեկատվությունը փոխանցում է արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը վարող անձին, եթե ռեեստրը վարող անձը պահառուից տարբեր անձ է:

13. Եթե արժեթղթերի անվանատերը պահառուն է, ապա պահառուն արժեթղթերը դրա սեփականատիրոջ հաշվին մուտքագրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում արժեթղթի սեփականատիրոջ վերաբերյալ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված տեղեկատվությունը փոխանցում է արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը վարող անձին, եթե ռեեստրը վարող անձը պահառուից տարբեր անձ է:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին [*]

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները» թիվ 150-Ն որոշմամբ հաստատված Հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

1) Հավելվածի 3-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) տեղում ստուգումների արդյունքների ամփոփման հիման վրա կազմվող ստուգման հաշվետվությունները և դրանց վերաբերյալ առարկությունների ու բացատրությունների պատճեններ»ե:

2) Հավելվածի 4-րդ կետի աղյուսակը լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

6.	Հաշվետվություն Բյուրոյի կողմից հայտնաբերված խախտումների և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ (համաձայն Հավելված 6-ի)	6	եռամսյակային

3) Հավելվածի 6-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ստուգման հաշվետվությունների և դրանց վերաբերյալ առարկությունների ու բացատրությունների պատճենները Կենտրոնական բանկ են ներկայացվում ստորագրված բնօրինակներն ապահովագրական ընկերություններից ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:»:

4) Հավելվածը լրացնել 6.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Թիվ 6 հաշվետվությունում լրացվում է տեղեկատվություն Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և/կամ Բյուրոյի կանոնների հետ կապված Բյուրոյի կողմից արձանագրված կամ բացահայտված խախտումների, այդ խախտումների համար Բյուրոյի կողմից կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ, մասնավորապես՝

1) Բյուրոյի կողմից արձանագրված այն խախտումների դեպքում, որոնց համար հաշվետու եռամսյակի ընթացքում է Բյուրոյի կողմից կիրառվել կարգապահական տույժ և/կամ որոշում է ընդունվել խախտման համար կարգապահական տույժ չկիրառել՝ վարույթը կարճել, թիվ 6 հաշվետվությունը լրացվում է ամբողջությամբ,

2) Բյուրոյի կողմից հաշվետու եռամսյակի ընթացքում հայտնաբերված այն խախտումների դեպքում, որոնց գծով Բյուրոն կարգապահական տույժ կիրառելու իրավասություն չունի, թիվ 6 հաշվետվության մեջ լրացվում են միայն 1-5-րդ սյունակները,

3) Թիվ 6 հաշվետվության 10-րդ սյունակում ոչինչ չի լրացվում, եթե տրված հանձնարարականը կատարման ժամկետ չի պարունակում:»:

5) Հավելվածի Հավելված 3-ի աղյուսակ 1-ը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

3. Գույքային և անձնական վնասների գծով:				

6) Հավելվածի Հավելված 3-ի աղյուսակ 2-ի 2-րդ սյունակի և աղյուսակ 3-ի 2-րդ, 3-րդ սյունակների վերնագրերից հանել «բժշկական փոխհատուցման» բառերը:

7) Հավելվածը լրացնել Հավելված 6-ով՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 մարտի 2011 թ., N 45-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մարտի 1-ի
թիվ 45-Ն որոշմամբ

Հավելված 6
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի
թիվ 150-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԻՎ 6)

Ամսաթիվ _____

N	Խախտում թույլ տված իրավաբանական անձի անվանումը	Խախտման նկարագիրը	Խախտման իրավական հիմքերը (խախտված իրավական ակտի անվանումը և խախտված դրույթը)	Խախտումը թույլ տալու ամիսը, ամսաթիվը (հնարավորության դեպքում)	Խախտումը հայտնաբերելու ամիսը, ամսաթիվը, ապացույցների հերթական համարը	Խախտման համար կիրառված կարգապահական տույժերը	Վարույթը կարճելու հիմքերը	Կարգապահական տույժ կիրառելու կամ վարույթը կարճելու ամիսը, ամսաթիվը	Տրված հանձնարարականի բովանդակությունը	Հանձնարարականի կատարման ժամկետը
	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
...										

_____
(Բյուրոյի գործադիր տնօրենի ստորագրությունը)

_____
(Վերահսկող ծառայության ղեկավարի ստորագրությունը)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածը, 46-րդ հոդվածի 1-ին մասը, «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին» թիվ 199-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 9) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) Կանոնակարգի 9-ը 2.2 կետից հետո լրացնել նոր կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.3. ***Նույն թողարկման թղթադրամներ***՝ նույն դիզայնով և նույն չափերով տարբեր տարիներին թողարկված ՀՀ թղթադրամներ, որոնք կարող են ունենալ միմյանցից տարբերվող պաշտպանական հատկանիշներ:

2.4. ***Նույն թողարկման մետաղադրամներ***՝ նույն չափերով տարբեր տարիներին թողարկված ՀՀ մետաղադրամներ, որոնք կարող են ունենալ միմյանցից տարբերվող պաշտպանական հատկանիշներ:

2.5. ***Թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորում***՝ թղթադրամների կամ մետաղադրամների միավորում ամբողջական և/կամ ոչ ամբողջական արմատների, գլանակների, այնուհետև ծրարների կամ պարկերի մեջ՝ գրանցելով համապատասխան վավերապայմաններ:»:

2) Կանոնակարգ 9-ի Կանոն 6-ը շարադրել նոր խմբագրությամբ.

«Կանոն 6. Հայաստանի Հանրապետության թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը բանկերում

6.1. Բանկերում թղթադրամները և մետաղադրամները փաթեթավորվում են բացառապես սույն կանոնի պահանջներին համապատասխան:

6.2. Բանկերում թղթադրամները և մետաղադրամները փաթեթավորվում են գանձապահների կողմից ավտոմատ փաթեթավորող համակարգերի (այսուհետ՝ Ավտոմատ համակարգ) և/կամ ձեռքի աշխատանքի միջոցով:

6.3. Շրջանառության համար պիտանի և հնամաշ թղթադրամներն ու մետաղադրամները փաթեթավորվում են առանձին:

6.4. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման 100 հատ թղթադրամը, համապատասխան փաթեթաթղթով փաթեթավորված, համարվում է մեկ ամբողջական արմատ: Փաթեթաթղթի վրա նշվում են փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, թղթադրամի անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը կամ անվանական դրոշմակնիքը, ստորագրությունը:

6.5. Նույն անվանական արժեքի թղթադրամների տասը ամբողջական արմատից ձևավորված փաթեթը համարվում է մեկ ամբողջական կապոց:

6.6. Նույն անվանական արժեքի թղթադրամների ամբողջական արմատները, որոնցից հնարավոր չէ ձևավորել ամբողջական կապոց, ձևավորվում է որպես ոչ ամբողջական կապոց: Նույն անվանական արժեքի թղթադրամների ամբողջական և ոչ ամբողջական արմատներից կամ նույն անվանական արժեքի մեկ ոչ ամբողջական արմատից ձևավորված կապոցը ևս համարվում է ոչ ամբողջական կապոց, որը չի կարող պարունակել 1000 և ավելի հատ թղթադրամ:

6.7. Ամբողջական և ոչ ամբողջական կապոցները համալրվում են համապատասխան վրադիրով կամ պիտակով: Վրադիրի կամ պիտակի վրա նշվում են փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթե-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. մարտի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23.03.2011 թ. (ՀՀԳՏ N7 (390), 1.04.2011):

թավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, թղթադրամի անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը կամ անվանական դրոշմակնիքը, վրադիրի դեպքում՝ նաև ստորագրությունը: Ոչ ամբողջական կապոցի վրադիրի կամ պիտակի աջ անկյունում նշվում են նաև «ոչ ամբողջական» բառերը:

6.8. Նույն գանձապահի կողմից տարբեր ամսաթվերին փաթեթավորված կամ տարբեր գանձապահների կողմից փաթեթավորված նույն անվանական արժեքի թղթադրամների արմատներից ձևավորված ամբողջական կամ ոչ ամբողջական կապոցը համարվում է հավաքական: Հավաքական կապոցները համալրվում են համապատասխան վրադիրով կամ պիտակով, որի վրա նշվում են փաթեթավորող բանկի և մասնաճյուղի անվանումը, անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը կամ անվանական դրոշմակնիքը, վրադիրի դեպքում՝ նաև ստորագրությունը, ինչպես նաև աջ անկյունում նշվում են ամբողջական կապոցների համար «հավաքական», իսկ ոչ ամբողջականի համար՝ «ոչ ամբողջական հավաքական» բառերը:

6.9. Գանձապահները թղթադրամները փաթեթավորում են յուրաքանչյուր անվանական արժեքի թղթադրամի համար նախատեսված փաթեթաթղթերով և վրադիրներով՝ համաձայն սույն կանոնակարգի ենթահավելված 13-ի:

6.10. Թղթադրամները Ավտոմատ համակարգով փաթեթավորելու դեպքում կարող են օգտագործվել առանց գունային տարբերակումների փաթեթաթղթեր, որոնց համար սույն կանոնի 6.4 կետում սահմանվող վավերապայմանները պարտադիր չեն:

6.11. Թղթադրամների կապոցները փաթեթավորվում են պոլիէթիլենային ծրարներով: Արմատները փաթեթավորվում են միայն լայնակի:

6.12. Թղթադրամների կապոցները գանձապահների կողմից փաթեթավորելու դեպքում լայնակի փաթեթավորված թղթադրամների արմատները և վրադիրը պոլիէթիլենային ծրարների մեջ տեղադրելուց հետո ծրարի բաց եզրը եռակցվում է՝ ծրարի վրա դրոշմելով փաթեթավորող բանկի կոդը (նշանը): Ավտոմատ համակարգերի միջոցով փաթեթավորելու դեպքում պիտակի տեղադրումից հետո ծրարի բաց եզրը միայն եռակցվում է:

6.13. Տարբեր թողարկումների նույն անվանական արժեքով թղթադրամները նույն արմատում չեն փաթեթավորվում:

6.14. Կենտրոնական բանկ հանձնելու դեպքում՝

1) 1000 դրամ անվանական արժեքով թղթադրամները փաթեթավորվում են միայն ամբողջական կապոցներով,

2) 5000 դրամ և 10000 դրամ անվանական արժեքով թղթադրամները կարող են փաթեթավորվել ոչ ամբողջական կապոցներով, սակայն ոչ պակաս, քան ամբողջական արմատներով,

3) 500 դրամ, 20000 դրամ, 50000 դրամ և 100000 դրամ անվանական արժեքով թղթադրամները կարող են փաթեթավորվել թղթադրամների փաստացի առկա քանակի չափով:

6.15. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման մետաղադրամները փաթեթավորվում են առանց արտաքին կարերի կտորե պարկերում: Յուրաքանչյուր պարկին ամրացվում է պիտակ, որի վրա նշվում է փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, մետաղադրամի անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը կամ անվանական դրոշմակնիքը, ստորագրությունը:

6.16. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման մետաղադրամները կարող են փաթեթավորվել նաև պոլիէթիլենային փաթեթներում: Մետաղադրամները և սույն կանոնի 6.15 կետի վավերապայմաններով վրադիրը պոլիէթիլենային ծրարների մեջ տեղադրելուց հետո ծրարի բաց եզրը եռակցվում է՝ ծրարի վրա դրոշմելով փաթեթավորող բանկի կոդը (նշանը):

6.17. Մետաղադրամները նախքան պարկերի մեջ տեղադրելը փաթեթավորվում են թղթե կամ պոլիէթիլենային փաթեթներում՝ յուրաքանչյուր ծրարում 100 հատ մետաղադրամ:

6.18. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման 50 հատ մետաղադրամները կարող են նաև համապատասխան փաթեթաթղթով փաթեթավորվել գլանակների տեսքով: Գլանակի փաթեթաթղթի վրա նշվում է փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, մետաղադրամի անվանական արժեքը, գումարը թվերով:

6.19. Պարկերում փաթեթավորվող մետաղադրամները Կենտրոնական բանկ հանձնելու դեպքում բանկերի կողմից կարող են փաթեթավորվել առանց սույն կանոնի 6.17 կետով նախատեսված թղթե կամ պոլիէթիլենային փաթեթների մեջ տեղադրելու:

6.20. Մետաղադրամները պարկերում տեղադրելուց հետո՝

1) կապվում են լարանով՝ պիտակի հետ միասին, և ծայրերն ամրակցվում կապարակնիքով, կամ

2) կնքվում են միանգամյա օգտագործման համարակալված կնիքով՝ պիտակի հետ միասին:

6.21. Գլանակների տեսքով փաթեթավորված մետաղադրամները փաթեթավորվում են ինչպես կտորե պարկերում, այնպես էլ պոլիէթիլենային ծրարներով՝ յուրաքանչյուրում 20 հատ գլանակ, որի մեջ դրվում է սույն կանոնի 6.15 կետի վավերապայմաններով վրադիր:

6.22. Պոլիէթիլենային ծրարների մեջ գլանակները տեղադրելուց հետո ծրարի բաց եզրն ամրակցվում է՝ ծրարի վրա դրոշմելով փաթեթավորող բանկի կոդը (նշանը):

6.23. Կենտրոնական բանկ հանձնվող մետաղադրամները բանկերի կողմից փաթեթավորում են միայն ամբողջական կտորե պարկերով կամ պոլիէթիլենային ծրարներով՝ սույն կանոնի 6.24 կետով նախատեսված սահմանաչափերով:

6.24. Կենտրոնական բանկ հանձնելու համար մետաղադրամները պարկերով կամ պոլիէթիլենային ծրարներով փաթեթավորելու համար սահմանվում են հետևյալ սահմանաչափերը.

10 լումա	- 300 դրամ	10 դրամ	- 10000 դրամ
20 լումա	- 500 դրամ	20 դրամ	- 20000 դրամ
50 լումա	- 1000 դրամ	50 դրամ	- 50000 դրամ
1 դրամ	- 2000 դրամ	100 դրամ	- 100000 դրամ
3 դրամ	- 3000 դրամ	200 դրամ	- 200000 դրամ
5 դրամ	- 5000 դրամ	500 դրամ	- 500000 դրամ

6.25. Հնամաշ, շրջանառությունից հետ կանչված, անվճարունակ, ինչպես նաև կեղծ թղթադրամները և մետաղադրամները անկախ անվանական արժեքից պետք է փաթեթավորել թղթադրամների/մետաղադրամների փաստացի առկա քանակի չափով:

Հնամաշ թղթադրամների արմատների փաթեթաթղթի, հնամաշ թղթադրամների կապոցի վրադիրի կամ պիտակի, հնամաշ մետաղադրամների պարկի պիտակի աջ անկյունում նշվում է նաև «Հնամաշ» բառը:

Անվճարունակ կամ կեղծ դրամանիշերի փաթեթի վրա նշվում են համապատասխանաբար «Անվճարունակ» կամ «Կեղծ» բառերը:

6.26. Հիշատակային մետաղադրամները փաթեթավորվում են առանձին պարկերով, յուրաքանչյուր պարկում 1000 հատ մետաղադրամ:

Հիշատակային մետաղադրամների պարկերին ամրացվում է պիտակ, որի վրա նշվում են սույն կանոնի 6.15 կետի վավերապայմանները, ինչպես նաև՝ հիշատակային մետաղադրամի անվանումը:

6.27. Եթե հիշատակային մետաղադրամների չափերը համապատասխանում են շրջանառու մետաղադրամների չափերին, ապա այդ մետաղադրամները կարող են փաթեթավորվել միասին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 մարտի 2011 թ., N 55-Ն

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի ապրիլի 12-ի նիստի «2011 թվականի ապրիլ ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի ապրիլի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 33

Իրական հատվածի ցուցանիշներ 36

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 39

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների ու պարտավորությունների արժութային կազմը

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրքը

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 44

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 45

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 57

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 76
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 87
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 89
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 94
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունները արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (12.04.2011)

2011 թվականի ապրիլի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թվականի ապրիլի 12-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Դարբինյանը, Ա. Նորեկյանը, Ա. Չիլինգարյանը, Ա. Մկրտչյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: Սպառողական զամբյուղի նոր կշիռների հիման վրա հաշվարկված 2011 թվականի մարտի 12-ամսյա գնաճը կազմել է 11.5%, ինչը ԿԲ խորհուրդը բավականին բարձր է համարում: Բարձր է նաև պարենային ապրանքների գների աճը, որի նպաստումը մարտի 12-ամսյա գնաճին կազմել է 8.3 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թվականի մարտին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 0.8% գնաճ, որին գերազանցապես նպաստել է պարենային ապրանքների գների աճը՝ 0.4 տոկոսային կետ, որից միայն 0.2 տոկոսային կետը բաժին է ընկել «Բանջարեղեն և կարտոֆիլ», 0.1 տոկոսային կետը՝ «Հացամթերք» ապրանքախմբերին: Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների նպաստումն ամսական գնաճին կազմել է համապատասխանաբար 0.1 և 0.3 տոկոսային կետ: Ծառայությունների գնաճը պայմանավորել է բուժսպասարկման, տրանսպորտի և հանգստի կազմակերպման սակագների աճը:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը, որը ներկայացնում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ տնտեսության ճյուղերի թողարկման ծավալների աճը, փետրվարին կազմել է 1.4%: Վերջինս արդյունք է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում (բացառությամբ՝ շինարարության) արձանագրված թողարկման ծավալների աճի: Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է 2.6% աճ՝ մետաղական հանքաքարերի արդյունահանման, սննդամթերքի, խմիչքների, մետալուրգիայի և մետաղյա արտադրատեսակների արտադրության ծավալների աճի հաշվին՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության վերականգնմամբ: Շինարարության ճյուղի թողարկման ծավալները նվազել են 4.1%-ով. ընդ որում, պետական բյուջեի, համայնքների միջոցների, միջազգային վարկերի և բնակչության միջոցների հաշվին շինարարության ծավալների կրճատումը որոշ չափով մեղմվել է կազմակերպությունների միջոցների և մարդասիրական օգնության հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճով: Ծառայությունների աճը հիմնականում արձանագրվել է մեծածախ առևտրի ծավալների, ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտի, ինչպես նաև տրանսպորտի ծառայությունների աճի արդյունքում: Գյուղատնտեսության ճյուղում թողարկման ծավալները գրեթե չեն փոխվել, իսկ անասնապահության ենթաճյուղում ձվի արտադրության ծավալների անկումը փոխհատուցվել է սպանդի համար իրացված անասունի և թռչնի արտադրության ծավալների աճով:

Ինչ վերաբերում է արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներին, ապա ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալների աճը 2011 թվականի հունվար-փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 27.6%, ապրանքների ներմուծման (ՍԻՖ) աճի տեմպը՝ 3.1%:

Ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի առաջին եռամսյակի զարգացումները: Եռամսյակի ընթացքում դրամավարկային պայմանների աստիճանական խստացման արդյունքում միջբանկային և ներբանկային ռեպո շուկաներում միջին տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել է 0.54 տոկոսային կետով և կազմել 7.6%: Չնայած դրան, առկա իրացվելիության պայմաններում ՊՊ առաջնային շուկայում նախորդ եռամսյակի համեմատությամբ արձանագրվել են տոկոսադրույքների նվազման միտումներ. մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը նվազել է 1.21 տոկոսային կետով և կազմել 7.9%, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը՝ 0.68 տոկոսային կետով և կազմել 13.7%:

2011 թ. առաջին եռամսյակում արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ եռամսյակի համեմատությամբ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.48%-ով՝ կազմելով 366.14 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 2.1%-ով՝ կազմելով 500.96 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 6.25%-ով՝ կազմելով 12.53 դրամ:

Չնայած վերաֆինանսավորման տոկոսադրույքի աստիճանական բարձրացմանը՝ շարունակում է պահպանվել վարկավորման ծավալների աճը, որը վերջին 12 ամիսներին կազմել է 29%: Ընդ որում, վարկավորման ընդհանուր ծավալում գերակշռել է արտարժութային միջոցներով վարկավորումը: 2011 թվականի առաջին եռամսյակում տրամադրված 55 մլրդ դրամ վարկերի շուրջ 44 մլրդ դրամը տրամադրվել է արտարժույթով: Վարկավորման աճի նման տեմպերը ԿԲ խորհուրդը մտահոգիչ համարեց համախառն պահանջարկի աճի միջոցով հետագայում գնաճային ռիսկեր առաջացնելու առումով:

Արտարժույթով վարկավորման մեծ ծավալների պայմաններում եռամսյակի ընթացքում արտարժութային ավանդները առաջանցիկ 7.3%-ով (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը 6%-ով) ավելացել են դրամային ավանդների 0.7% աճի դիմաց՝ հանգեցնելով դրամային զանգվածի 4.7%-ով նվազման, փողի զանգվածի 0.5%-ով աճի: Ագրեգատների 12-ամսյա զարգացումները, արտացոլելով ապադոլարայնացման միջոցառումների արդյունքները, ցույց են տալիս, որ դրամային զանգվածն առաջանցիկ 22.8%-ով ավելացել է փողի զանգվածի համեմատությամբ՝ 11.9%. դրամային և արտարժութային ավանդների 12-ամսյա աճը կազմել է համապատասխանաբար 40.4% և 1.2% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը 8.5%-ով): Արդյունքում, 12-ամսյա կտրվածքով դոլարայնացման մակարդակը նվազել է 9.6%-ով:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

2011 թվականի առաջին եռամսյակում պարենային ապրանքների միջազգային շուկաներում արձանագրվեցին գների էական տատանումներ՝ պայմանավորված հիմնական նավթ արտահանող երկրներում աշխարհաքաղաքական զարգացումների և Ճապոնիայի տարերային աղետի հետևանքով ձևավորված անորոշություններով: Այս իրավիճակում եռամսյակի առաջին կեսին գրեթե բոլոր հումքային և պարենային ապրանքների գները սահմանեցին վերջին երկու տարիների համար նոր բարձրակետեր, որին եռամսյակի վերջում հետևեցին նվազման ուղղությամբ ճշգրտումներ: Խորհուրդն արձանագրեց, որ թեև ներկայումս պարենային ապրանքների միջազգային շուկաներում դիտվում է գների աճի տեմպերի անկում, սակայն 2011 թվականի առաջին եռամսյակում կանխատեսումների համեմատ դրանց առաջանցիկ աճի արձանագրումն առաջիկա ժամանակահատվածի համար ներքին տնտեսությունում կպահպանի արտաքին գնաճային ճնշումները, գնաճի երկրորդային ազդեցությունները, գնաճային սպասումները:

Տնտեսության ներքին հատվածից եկող ազդակներն առավելապես ոչ գնաճային են: Աշխատանքի շուկայից առկա են թույլ գնաճային ճնշումներ, մասնավոր ծախսում-

ների ազդեցությունն առավելապես չեզոք է, սակայն առկա են ռիսկեր՝ կապված վարկավորման և տրանսֆերտների արագ աճի հետ: Գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկված միջոցառումները կնպաստեն 2010 թվականի արդյունքներով այդ ճյուղում կրճատված առաջարկի վերականգնմանը (կանխատեսվող բարենպաստ բնակլիմայական պայմաններում) արդեն իսկ առաջիկա ամիսներին: Վերոնշյալ միջոցառումները, ինչպես նաև 2011 թ. տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացումը, հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությունը համախառն պահանջարկի ձևավորման վրա, պետական այլ կառույցների աջակցությունը հակագնաճային միջոցառումների իրականացման գործընթացում իրական նախադրյալներ կստեղծեն գնաճը երկրորդ կիսամյակից նպատակային միջակայք վերադարձնելու համար:

Հաշվի առնելով վերը նկարագրված միջավայրը, որտեղ առաջիկա ժամանակահատվածի համար ռիսկեր են առաջացնում ամիսներ շարունակ արձանագրված բարձր գնաճի երկրորդային ազդեցությունները և գնաճային սպասումները, վերջիններիս չեզոքացման նպատակով ԿԲ խորհուրդը որոշեց շարունակել դրամավարկային պայմանների խստացումն ավելի փոքր քայլով: Նախորդ երկու ամիսներին վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5-ական տոկոսային կետով բարձրացնելուց հետո ապրիլին խորհուրդը որոշեց բարձրացրեց այն 0.25 տոկոսային կետով՝ միաժամանակ առավել ակտիվորեն կիրառելով իրացվելիության կարգավորման գործիքները:

2011 թվականի ապրիլի 12-ի նիստում Խորհուրդը սահմանեց ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի 8.5%, լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքների համապատասխանաբար 11.5% և 5.5% մակարդակներ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2011թ. փետրվար*	*2011թ. փետրվարի իրական աճի հնդեքսը 2010թ. փետրվարի նկատմամբ (%)*	*2011թ. մարտ*	*2011թ. մարտի իրական աճի հնդեքսը 2010թ. մարտի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	100.9 [1]	-	100.3
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	68950.7	102.6	76904.6	105.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	588.8	122.1	603.8	107.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	20016.9	100.1	24524.6	98.0
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	121797.8	101.4[1]	143391.4	105.0
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	12027.1	95.9	23363.0	94.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	57691.4 [1]	106.3	65184.3	92.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	107922 [1]	94.6 [2]	111915	94.6 [2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1177.8		1177.4	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	78.0		77.6	
Գործազրկության մակարդակը *(%)*	6.6		6.6	

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2011 թ.	*Սպառողական գների հնդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հնդեքս*	*Գների հնդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.4 [1]	102.3	98.0	102.0
Փետրվար	100.9 [1]	103.3	103.6	103.4
Մարտ	100.8	99.4	87.4	102.8
2011 թ. հունվար – մարտը 2010 թ. հունվար – մարտի համեմատությամբ	111.1	115.7	103.7	139.1

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2009*	*2010*	*2011*	*2011*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.2	1.7	3.4[1]	3.4[1]	10.3[1]
Փետրվար	-1.8	0.3	0.9[1]	0.9[1]	11.4[1]
Մարտ	1.4	0.8	0.8	0.8	11.5
Ապրիլ	3.2	1.3			
Մայիս	1.6	1.0			
Հունիս	-0.3	-0.8			
Հուլիս	-2.7	-0.8			
Օգոստոս	-0.4	1.3			
Սեպտեմբեր	0.7	-0.2			
Հոկտեմբեր	0.5	1.0			
Նոյեմբեր	1.2	1.6			
Դեկտեմբեր	2.0	1.8			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	6.5	9.4			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.4	8.2			

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ[2]

Անվանում	*2011 թ. մարտը 2010 թ. մարտի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)[2]*
ՍԳԻ	**100.8**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**100.8**	**0.40**
Բանջարեղեն և կարտոֆիլ	103.3	0.21
Հացամթերք	101.3	0.14
Սուրճ, թեյ, կակաո	102.0	0.07
Կենդանական և բուսական յուղեր	101.6	0.05
Միրգ	97.8	-0.08
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.5**	**0.10**
Կոշկեղեն	101.2	0.02
Հագուստ և գործվածք	100.5	0.01
Լվացող միջոցներ	99.9	-0.002
Մշակույթի ապրանքներ	97.8	-0.007
Ծառայություններ, որից՝	**100.9**	**0.30**
Բուժսպասարկման	105.1	0.19
Տրանսպորտի	102.8	0.09
Կապի	99.7	-0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	*2008*	*2009*	*2010*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.40	-0.29	0.48	0.77[4]
Փետրվար	0.83	-0.53	0.74	0.45[4]
Մարտ	0.66	1.14	0.82	0.70
Ապրիլ	1.26	1.46	0.70	
Մայիս	0.55	0.41	0.04	
Հունիս	0.30	0.25	-0.22	
Հուլիս	0.02	-0.22	-0.42	
Օգոստոս	0.06	0.37	0.17	
Սեպտեմբեր	0.48	0.72	0.63	
Հոկտեմբեր	0.10	0.48	1.21	
Նոյեմբեր	0.25	0.62	1.18	
Դեկտեմբեր	0.08	0.61	0.63	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.91	4.63	6.20	6.74[4]
Փետրվար	3.77	3.02	7.59	6.19[4]
Մարտ	4.54	3.33	7.14	6.18
Ապրիլ	5.66	3.47	6.35	
Մայիս	5.94	3.37	5.92	
Հունիս	6.47	3.36	5.40	
Հուլիս	6.75	3.20	5.16	
Օգոստոս	6.97	3.52	4.96	
Սեպտեմբեր	6.99	3.71	4.86	
Հոկտեմբեր	6.21	4.16	5.53	
Նոյեմբեր	5.56	4.72	6.16	
Դեկտեմբեր	5.37	5.25	6.26	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)*
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**106.18**
Տավարի միս	**0.99**
Պանիր տնական (կովի կաթից)	**0.71**
Ծառայություններ հիվանդանոցների	**0.39**
Պանիր «Չանախ»	**0.32**
Չու	**0.25**
Կարագ	**0.24**

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[2] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

[3] *ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ՝ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:*

[4] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	*2011 թ. հունվար - փետրվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար - փետրվարը 2010 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*2011 թ. հունվար - մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – մարտը 2010 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	156.3	127.3	248.5	125.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	531.7	103.1	869.8	106.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	375.5	95.5	-621.3	100.4

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – մարտ			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	162769	30091	132678	1114114	172036	942078
ԱՄՆ	29544	27586	1958	124426	108425	16001
Ուկրաինա	3798	5127	-1328	20197	20724	-527
Ղազախստան	3262	749	2513	19845	3082	16763
Գերմանիա	4667	3605	1062	21175	23861	-2686
Իսպանիա	1381	1984	-603	8368	10834	-2466
Ֆրանսիա	3114	2210	904	17062	18774	-1711
ԱՄԷ	2682	14159	-11477	26198	55500	-29303
Չինաստան	560	15661	-15101	2068	80011	-77943
Թուրքիա	665	7363	-6698	2639	40547	-37909
Այլ երկրներ	49254	30095	19159	270964	197761	73203
Ընդամենը	**261696**	**138629**	**123067**	**1627056**	**731555**	**895500**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	83369	14149	69220	206114	34065	172049
ԱՄՆ	11382	10554	829	26943	27305	-363
Ուկրաինա	1581	2133	-552	4179	5163	-985
Ղազախստան	1788	357	1431	4541	826	3714
Գերմանիա	1802	2407	-605	5407	5270	138
Իսպանիա	810	993	-183	2082	2165	-82
Ֆրանսիա	1774	1135	638	3979	3088	892
ԱՄԷ	2112	6257	-4145	5259	14061	-8802
Չինաստան	598	7854	-7256	1055	15525	-14470
Թուրքիա	257	3330	-3073	759	8245	-7486
Այլ երկրներ	25944	15300	10644	66432	45452	20980
Ընդամենը	**131417**	**64469**	**66948**	**326749**	**161165**	**165584**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – մարտ			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	155597	23811	131786	1062266	116950	945316
ԱՄՆ	14182	5566	8616	67789	24554	43235
Ուկրաինա	3783	2959	825	19290	13433	5857
Ղազախստան	2829	157	2673	18434	1021	17414
Գերմանիա	2666	983	1683	10586	5346	5240
Իսպանիա	1167	380	787	7232	2286	4946
Ֆրանսիա	2053	755	1298	9443	3731	5712
ԱՄԷ	733	1535	-803	3581	6904	-3323
Չինաստան	140	1225	-1085	789	5970	-5181
Թուրքիա	254	1243	-989	1182	6246	-5064
Այլ երկրներ	20182	7632	12551	93144	35323	57821
Ընդամենը	**203587**	**46246**	**157341**	**1293736**	**221763**	**1071973**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	79300	11796	67504	195526	27483	168043
ԱՄՆ	7004	2042	4962	18035	6626	11409
Ուկրաինա	1457	1391	66	3862	3440	421
Ղազախստան	1645	306	1339	4248	518	3730
Գերմանիա	1032	511	521	2679	1318	1362
Իսպանիա	732	202	530	1809	737	1072
Ֆրանսիա	1035	404	631	2487	1012	1475
ԱՄԷ	241	406	-165	653	1272	-619
Չինաստան	64	734	-670	135	1318	-1183
Թուրքիա	93	479	-385	308	1156	-849
Այլ երկրներ	9231	3230	6001	21619	8632	12987
Ընդամենը	**101835**	**21501**	**80334**	**251361**	**53511**	**197850**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ[1,2]

2010	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս[3]	Դ[3]	Ն[3]	Դ[3]
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	124.6	125.9	121.5	122.8	132.0	137.8	135.7	135.7	135.0	132.3	134.9	138.8
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	214.3	217.3	209.5	209.8	223.4	235.0	233.1	231.4	232.5	227.1	228.9	232.8
2011	**Հ[3]**	**Փ[3]**	**Մ[3]**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	139.3	137.5	134.0									
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	227.7	224.6	218.4									

[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով:
[2] 2009 թ. օգոստոսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը (նախկինում՝ 2000թ.=100)
[3] Ըստ ԿԲ նախնական գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2010	2011		
	Դ [3]	Հ	Փ	Մ [4]
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**
Համախառն միջազգային պահուստներ	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**
Ոսկի	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	33.5	34.0	31.3	31.5
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0
Արտարժույթ [2]	1832.3	1783.0	1758.6	1791.9

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**699.9**	**710.5**	**714.2**	**721.2**
ԱՄՀ վարկ	487.9	495.3	497.5	502.0
ՀՓԻ տեղաբաշխում	135.6	137.6	138.5	139.6
Այլ վարկեր	75.9	77.3	77.9	79.3
Այլ պարտավորություններ	0.5	0.4	0.4	0.3

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*


[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնական կառավարման կարճաժամկետ արժեթղթեր և ավանդներ ժամկետային տեղաբաշխմամբ	կենտրոնական կառավարման հաշիվներ պարտադրողական	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2010								
Դեկտեմբեր	12124	12124	106544	672	1	515	107733	**-95609**
2011								
Հունվար	12236	12236	135069	3168	1	515	138753	**-126517**
Փետրվար	13101	13101	112661	3238	1	521	116421	**-103320**
Մարտ	13608	13608	101877	3334	1	524	105736	**-92128**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Հրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատկիչ [5]	Դրամայնացման գործակից [6]
2010										
Դեկտեմբեր	507552	304324	128365	432689	88944	521633	389753	911386	1.80	1.27
2011										
Հունվար	463214	275472	112972	388444	93352	481796	394639	876435	1.89	1.26
Փետրվար	482014	276563	117936	394500	100647	495147	399295	894442	1.86	1.21
Մարտ	506325	278219	126771	404990	103198	508188	417671	925859	1.83	1.22

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
540000
480000
420000
360000
300000
240000
180000
120000
60000
0
08
09
10
11
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
05
06
07
08
09
10
11


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
05
06
07
08
09
10
11


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2010					
Հունվար	457685	259472	358736	416745	786819
Փետրվար	454592	263807	364495	426307	813713
Մարտ	481743	268524	362690	427897	826030
Ապրիլ	487664	269934	371903	435175	816383
Մայիս	468045	268863	374829	439881	809663
Հունիս	451251	270570	377333	445295	803968
Հուլիս	440056	266369	368734	439485	797370
Օգոստոս	435927	261879	368202	436157	789543
Սեպտեմբեր	431419	265420	373200	443501	801256
Հոկտեմբեր	435123	265816	374426	448448	813070
Նոյեմբեր	446763	269424	382503	458349	829154
Դեկտեմբեր	454628	276953	396429	477786	861865
2011					
Հունվար	462951	283399	399807	488359	883590
Փետրվար	485483	287137	404007	502933	901074
Մարտ	510185	300499	429155	536767	937147

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***453765***	***427700***	***414080***	***421304***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***53787***	***35514***	***67934***	***85022***
Կառավարություն	-95609	-126517	-103320	-92128
Բանկեր	57425	67249	67799	67220
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	8023	6040	6035	5034
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0
Ավանդներ (-)	-12103	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	91971	94782	103455	109930
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***507552***	***463214***	***482014***	***506325***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	348165	312940	312393	312420
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	57516	66614	94205	96027
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	88237	70189	62502	82272
Այլ հաշիվներ	13635	13471	12914	15606
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	3906	3664	3324	8590
Այլ հաշիվներ (արտարժույթով)	9729	9807	9590	7017
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-26065***	***-13620***	***7224***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-18273***	***32420***	***17088***
Կառավարություն	-	-30908	23197	11193
Բանկեր	-	9824	550	-580
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-1983	-5	-1001
ավանդներ (-)	-	-12103	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	2811	8673	6475
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-44338***	***18800***	***24312***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-35225	-547	27
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	9098	27591	1822
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-18047	-7687	19770
Այլ հաշիվներ	-	-164	-557	2692
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-241	-340	5266
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	78	-217	-2573
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-5.7***	***-3.2***	***1.7***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-34.0***	***91.3***	***25.2***
Կառավարություն	-	-32.3	18.3	10.8
Բանկեր	-	17.1	0.8	-0.9
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	3.1	9.2	6.3
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-8.7***	***4.1***	***5.0***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-10.1	-0.2	0.0
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	15.8	41.4	1.9
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-20.5	-11.0	31.6
Այլ հաշիվներ	-	-1.2	-4.1	20.8

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011		
	Դ	Հ	Փ	Մ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-229981**	**-213566**	**-227207**	**-257402**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	116970	135050	139764	122882
